


ԳԵՐՍԱՄ ԱՏԱՐՈՆԵԱՆԻ ՀԵՏ (1972 - 1980 ԹԹ.)

Posted on March 15, 2011 by Keghart



A historical
survey of the
Armenian case
Kersam
Aharonian

Category: [Opinions](#)



Համօ Մոսկոֆեան, Պէյրուօ, 15 Մարտ 2011

✘ 1972-ին աշնան, Ռ.Ա. կուսակցութեան կազմակերպած հանդիսութեան մը աւարտին, ինծի մօտեցաւ «Չարթօնք»-ի խմբագրապետ, Լիբանանի հայութեան ականաւոր գաւակ ընկեր Գերսամ Ահարունեան եւ առաջարկեց աշխատակցիլ օրաթերթին, արհեստավարժ մակարդակով: Հ.Բ.Ը.Մ.ի Հովակիմեան-Մանուկեան վարժարանէն նոր շրջանաւարտ, ամիս մըն ալ Գերմանիոյ Ախիէն քաղաքը այցելած եւ մասնագիտացած 18-ամեայ երիտասարդի մը համար մեծ պատիւ էր այդպիսի առաջարկ մը ստանալ մեր պատմութեան եւ Հայաստանի աշխարհագրութեան նախկին ուսուցիչէն՝ սփիւռքահայ մամուլի եւ ազգային կեանքի իսկական մեծուրէնէ մը....:

Համօ Մոսկոֆեան, Պէյրուօ, 15 Մարտ 2011

✘ 1972-ին աշնան, Ռ.Ա. կուսակցութեան կազմակերպած հանդիսութեան մը աւարտին, ինծի մօտեցաւ «Չարթօնք»-ի խմբագրապետ, Լիբանանի հայութեան ականաւոր գաւակ ընկեր Գերսամ Ահարունեան եւ առաջարկեց աշխատակցիլ օրաթերթին, արհեստավարժ մակարդակով: Հ.Բ.Ը.Մ.ի Հովակիմեան-Մանուկեան վարժարանէն նոր շրջանաւարտ, ամիս մըն ալ Գերմանիոյ Ախիէն քաղաքը այցելած եւ մասնագիտացած 18-ամեայ երիտասարդի մը համար մեծ պատիւ էր այդպիսի առաջարկ մը ստանալ մեր պատմութեան եւ Հայաստանի աշխարհագրութեան նախկին ուսուցիչէն՝ սփիւռքահայ մամուլի եւ ազգային կեանքի իսկական մեծուրէնէ մը....:

Շուտով սկսաւ մեր համագործակցութիւնը, նորակառոյց Թէքէեան կեդրոնին մէջ, տրամադրուած արդիական գրասենեակով, ուր նախ որպէս մարզական մեկնաբան ու լրագրող, ապա պատմա-քաղաքական յօդուածաշարքերու հեղինակ, անմիջական օգնութեամբ ու ցուցմունքներով Գերսամ Ահարունեանին: Մեծ հեղինակութիւն վայելող ամենուրեք եզակի ու խիզախ խմբագրականներով, ելոյթներով, հզօր ներկայութեամբ՝ իսկական հայր ու եղբայր, բոլոր հաւատաւոր ու հայրենասէր երիտասարդներուն՝ Միհրան Տամատեանի, Մկրտիչ Փորթուզալեանի ու Վահան Թէքէեանի անմահ գործին շարունակողը:

Իր անձնական նախաձեռնութեամբ ու այն օրերու Ռ.Ա.Կ.ի ղեկավարութեան ջանքերով է, որ կարելի եղաւ հսկայ գումար հանգանակել ու կառուցել նախա-պատերազմեան Լիբանանի հայ իրականութեան լաւագոյն կառոյցներէն մէկը՝ Վահան Թէքէեան կեդրոնը՝ Պէյրուօի Ժըմմէյզի թաղամասին մէջ: Այնտեղ հաստատուեցան ոչ միայն օրաթերթին խմբագրութիւնը, այլեւ կուսակցութեան կեդրոնատեղին, իսկ վերջին յարկի լայն սրահին մէջ՝ ամեն շաբաթավերջին տեղի կ'ունենային հաւաքոյթներ, գինեծօններ եւ նորագիր կուսակցականներու շարքերու ընդունման, օծման արարողութիւններ:

Փառքի տարիներ էին, մանաւանդ որ ամեն նիւթական միջոց ապահովուած էր կայուն

պահելու կուսակցութեան պաշտօնական ծայն՝ «Չարթօնք»-ը: Հազարաւոր անդամներ
Լիբանանի թէ Միջին ու Մերձաւոր Արեւելքի մէջ, Եւրոպա եւ Ամերիկա: Իսկ ամենէն
կարելորդ՝ միաբան ու միակուռ շարքեր՝ որոնք քաղաքական, ազգային, մշակութային,
տեղեկատուական, հայրենասիրական ամուր նեցուկ եւ աջակցութիւն էին Մայր
Հայրենիքին եւ Սփիւռքին: Գերսամ Ահարոնեանի հանդէպ յարգանքը մեծ էր, նաեւ
Հ.Բ.Ը.Մ.-ի վարիչներուն մօտ, ուր իր դասախօսի եւ սերունդներու դաստիարակի
պաշտօնը կարելոր դեր խաղցաւ Պօղոս-Նուպար փաշայի եւ հեռատես
գործակիցներուն հիմնադրած միութեան այդ տարիներու աննախընթաց ծաղկման ու
զարգացման մէջ՝ Լիբանանի թէ Միջին Արեւելքի մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի առաջին տարիներուն, հակառակ
յառաջացած տարիքին եւ վատառողջութեան, ռմբակոծութեանց եւ արձակազէններուն
վտանգը անարգելով, «Չարթօնք»ի խմբագրապետը միշտ կը գտնուէր Արեւելեան
Պէյրութի մէջ գտնուող խմբագրապետի գրասենեակին մէջ՝ ամէնօրեայ վտանգաւոր
“ճամբորդութիւնը” կատարելով Արեւմտեան Պէյրութի իր բնակարանէն մինչեւ Թէքէան
կեդրոն: Սակայն տարիներու խմբագրի, մտաւորականին, քաղաքական ղեկավարի
յոզնեցուցիչ կեանքը, Լիբանանի հայութեան եւ Ռ.Ա.Կ.ին նուիրեալ անդամներուն
արտագաղթը ի սփիւռ աշխարհի, աւելի եւս արագացուցին Գերսամին մեկնումը այս
անցողիկ աշխարհէն: Իր յաւերժ բացակայութեամբ՝ կուսակցութիւնն ու միութիւնը
կորսնցուցին իրենց աննկուն առաջնորդը, քաջարի խմբագիր եւ շարքերը միաւորուած
պահելու անփոխարինելի անձնաւորութիւն մը:

Մեր ջերմ բարեկամութիւնը վաղամեռիկ Շահէ Ահարոնեանին հետ նոյնպէս կարճատեւ
եղաւ այս բազմատաղանդ եւ ազգանուէր երիտասարդին յանկարծակի մահուան
պատճառով: “Ընկեր Շահիկ” իր բազմիմաստ երգիծանքով, “Գերսամական”
կեցուածքներով, «Չարթօնք»ին մէջ բազմաթիւ քաղաքական յօդուածներով կրնար
շարունակել իր արժանաւոր հօր Մեծ Երագի ճամբան՝ սակայն ճակատագիրը անխնայ
եղաւ անոր հանդէպ եւ այս աշխարհէն հեռացաւ, իղծերու եւ երագանքներու
իրագործման ճամբուն վրայ:

Տարիներու ընդմէջէն միշտ կը փորձեմ պատկերացնել Մեծն Գերսամ Ահարոնեանին
պայծառ դէմքը, գլուխ խոնարհելով անոր բազմավաստակ կեանքին, յիշատակին
առջեւ:

